

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ
Ե. ԲՈՐՈՒՅԻԱՆ

Իսթանբուլի կամ որ եւ է
զբնութիւն պետութեան ուղղելու
Տնօրին. ԱՐՇԱԼՈՍՍ քաղաքի
ԳԱՂԱՅԻՆ (Նախակառուցի)
Թիւ.

E. TOROSSIAN
Direc. propr. du journal arménien
ARCHAËLOUICE
LE CAIRE (EGYPTE)
Boite Postale No.

ԱՐՄԱՆԱԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՂԻՊՏՈՒ ՉԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՆԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան ծրարի	20
Վեցամսեայ »	13

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնդրագրութեան վրայ է:

Խնդրագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'եկ տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՐ
Կանխիկ վճարելի են

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՍՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՄՏԻԼ ԱԶԻԿ ՍԿԻԶԸ

Օտանկի դեղատանիկն դիտարկի փողոցիկն մեջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առա-
ւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8:
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,
կ'ընդունուին.

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիրքեր,
Հրատարակութիւններ, Մահազդներ, Տեղեկագիրներ,
Կանոնագիրներ, Տոմարներ և այլ և այլ վաճառ-
ուականական շինանարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագրութիւն և
չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ:

ԱԶԳ

Կը խնդրուի մեր թէ՛ տեղական
և թէ՛ արտասահմանի Պատուարժան բա-
ժանորդներէն որ բարեհաճին շուտով կար-
գադրել իրենց յետամնաց հաշիւներն,
թերթի հրատարակութեան նիւթական դժ-
ուարութիւններն մեր վրայէն թերթեցնելու
ապիւր և բարի մտածումով:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

Պատ. Տնօրին Արշաղոյս լրագրի:

Կը խնդրուի որ անկիւն մը շնորհել
հաճիք իմ հետեւեալ գրութեանս:

Նոր Օրի առաջին թիւը ձեռքս հասաւ:
Այդքան ահագին ազմուկներէ վերջ,
նորածին թերթի մը մասին իմ զգացած
հետաքրքրութիւնս յագեցնելու համար
միայն, կարգացի դայն՝ և ահա կը փութամ
և մանաւանդ կը փափաքիմ ըսել թէ՛ նոր
թերթը ինչ տպաւորութիւն թողուց իմ
վրայ:

Թերթի գինը տարեկան 50 զուրուշ է:
Որչափ կը յիշեմ քանիցս ձեզ ալ առաջար-
կուած լինելու է, ձեր Բ. րգ տարեշրջանի

սկիզբէն նոյնը ընել:
Այդ խոհեմութիւնը ձեզի պարտական
են ուրեմն նոր Օրի եռամսեայ հրատարա-
կիչներն:

Բայց խնդիր էր գիտնալ թէ՛ հայ թեր-
թերու երեւումը յաճախ ասուպի մը կը
նմանի:

Առանց ինկատի ունենալու անոր սոս-
կալի դժուարութիւններն, երբ խելքերնին
կը փչէ, թերթ մը հրատարակ կը նետեն.
տարեկանները կը դանձեն և տարեկանի մը
փոխարէն երկու ամիս կը վճարեն միայն.
որով փոխանակ ժողովուրդին բարոյականը
բարձրացնելու, ինչ որ իրենք կ'ըսեն, կը գայ-
թակեցնեն և անտարբերութիւնը անոնց
սրտին ու հոգւոյն մէջ մտցնելու պատճառ
կը դառնան:

Արդ՝ կրնա՞ք ապահովապէս ըսել մեզ
թէ՛ նոր թերթը, որուն ճակատը միայն
Վարչութիւնը բաւը նշանակուած է, ինչ
տարբերէ կը բաղկանայ: Պիտի կրնա՞ն գոնէ
տարի մը ամբողջ շարունակել՝ և չ'շարու-
նակուելու պահուն, բաժանորդաց վճա-
րումներն ո՞վ պիտի ետ դարձնէ:

Կարելի չէ՞ որ այդ բանը գուք ըսէք
մեզի. գուք՝ որ փորձառուն էք այլ ևս
լրագրական դժուարութեանց — մանաւանդ
Եգիպտոսի մէջ — և այսօր՝ հզօր ջանքերով
Տպարան մը հիմնեցիք ապահովելու համար
Արշաղոյսի տեղականութիւնը:

Նոր Օրի Վարչութեան անձանց մը ան-
դամներուն ձեռնարկին մէջ, այժմէն իսկ
փախուստի դձուր պատրաստուած կը տես-
նուին և քիչ մ'ալ ուղղամտութեան հա-
կառակ շարժումներ. մինչդեռ արգարու-
թեան և ուղղամտութեան ուրիշի բաժին
թողած չեն իրենց առաջին թուով:

Հարցնենք ուրեմն. ուղղամտութիւն է
հաւաստեցնել Սրբազան Հայրապետը թէ՛
Հասարակ-Ընթերցատունը «Վարչութիւնը
փախուցիկ իմ հաւա-
քեցի, հաւաստեաց իսկ է»:

Ուր է հաստատեալ «Հասարակ-Ընթեր-
ցատուն» վայրի մի հաւաքեցի: Գանի որ
այդ հաստատութեան Վարչութիւնը այժ-
մէն իսկ փոխած է այդ անունը, Շրջուն
Հասարակ — Ընթերցատուն անուններով
զայն:

Հաւատա՞նք թէ՛ Սրբազան Հայրա-
պետը, Հեղինակ յընտիր ընտիր Հատոր-
ներու, իր ուղղութեան վերաբերեցած
ըլլայ «հաստատեալ իսկ է և վայրի մի
հաւաքեցի» նախադասութիւններուն բուն
նշանակութիւնը և առանց անոր գործա-
ծած ըլլայ իւր Օրհնածիր կոնգակին մէջ:

կոնգակ՝ որուն ԻՐԱԽԱՐԲ մեծ կարեւո-
րութիւն ընծայած է Հասարակ-Ընթերցատու-
նի Վարչութիւնն և իւր առաջին թուով
հրատարակութեան սուած:

Երբ Սրբազան կոնգակի իմաստը կը
հակասէ Գործադիր Վարչութեան արարք-
ներն, ուղղամտութիւնը և ճշմարտութիւ-
նը ո՞ւր կը մնայ այն ատեն:

Ուրիշ հարց. Հասարակ — Ընթերցա-
տան Գործ. Ժողովոյ Գիւտնին կողմէ թեր-
թի Մրագիրը ու նպատակը պարունակող
նամակ մը ուղղուած է եղբր թերթին Վար-
չութեան:

Հետեւելով Ձեր նախորդ թուով Ընդ-
հանուր Գիւտնի Բ. Ատենադպրին հրատա-
րակութեան զրկած գրութեանը, կ'եզրա-
կացնենք թէ՛ Ընթերցատան և թերթին
վարչութիւնը միեւնոյն անձերն են, — ծա-
ծուկ անհաւանական հաշուի մէջ չ'դնելով.
որովհետեւ անոնք ի հարկին փախուստով
իրենք զիրենք պիտի չ'աղատեն:

Ուրեմն աւելորդ չէ՞ր իրենց իրենց
նամակներ գրելը:

Կը թուի ինձ թէ՛ այս ևս ուղղամտու-
թեան հակառակ է և վայրկեան մը կը փոր-
ձուիմ մտածել որ այդ թերթի վարչութիւ-
նը ամեն ինչ ինք իր մէջ ամփոփելով, Հաս-
արակ — Ընթերցատան անունը շահագործել
պիտի ուզէ և սա հաւանականութեան հե-
ռի չէ. որովհետեւ դեռ անձանցով կը մը-
նայ թէ՛ ինչո՞ւ հրատարակու ընդհ. Գի-
ւտնի Ա. Ատենապետն. թէ ինչո՞ւ ընդհա-
նուր ժողով չ'գումարուած և անոնց հաւա-
նութիւնը չ'անուած, թերթ մը հրատա-
րակ հանելու փութկոտութիւնը ի գործ
զրուեցաւ ընկերութեան մը անունով՝ որոյ
անդամներն իրենց վրայ պատասխա-
նատուութեան բաժինը ունենալով հանդերձ,
կանխաւ տեղեկութիւն ունենալու իրա-
ւունքէն կը զրկուին. Վարչութիւն կող-
ուած օրինազանցներու սանձարձակ ընթաց-
քէն:

Այս զեղծումներուն դէմ Ընդ. Ժողո-
վոյ անդամներն պէ՞տք է որ լուռ մնան:

(Շարն.) ՓԱՅԼԱԿ

— Պոսթօնի (Ամերիկա) մեր բարե-
կամներէն երիտասարդ գրագէտ Տիար Կ.
Յ. Գարակիւլեան, տեղեկանալով իրեն ան-
գական և վերջերս քաղաքիս մէջ հան-
գուցեալ բարեյիշատակ Հանի Հանն Եկա-
նակի մահը, հետեւեալ գրութիւնը զրկած է
մեզ, անոր հրատարակութիւնը խնդրելով:

Մեր երկամասրդ բարեկամ-գրագէտին այս փափաքը, թէ եւ քիչ մը ուշ կը կատարենք նախ դնուած շամար իւր գրական արժանիքը, և երկրորդ՝ հայ մայրերու բարութեան օրինակ մը ներկայացուցած ըլլալու առաւելութիւնը ինկատ ունենալով:

ԿՆ Ո Ջ Մ Ը Դ Է Մ Ք Ը

Ա.

Այն պահուն յորում գրիչը ձեռք կ'առնեմ գրելու նախ, նիւթին մեծութիւնը կը շիտթեցընէ զիս. կը նաւատամ թէ գրուած մը իւր կարեւորութիւնը ունի. բայց երբ ինչպէս առաջինութեան մը ներքոյն վրայ է, գրով ոչինչ կարելի է ըսել իրականութեան բարձրութիւնը հաստատելու համար. ո՛ր և է գովեստ կը նսեմանայ մեծ անուններու, մեծ սրտերու քով այնքան ճշմարիտ է թէ իրենց գործերը ինքնին կը գրուատեն զիրենք:

Բ.

Օտարութիւնը տխուր վիճակ մ'է. ոչինչ կը ժպտի տարազրին. ինք օտար է միջավայրին եւ միջավայրը օտար է իրեն. տեղւոյն գէպ-քերը ու անոնքը չ'են շահագրգռի գինքը եւ միւս կողմ իւր խոհերը ու յոյզերը իմաստ մը չ'ունին իւր որդեգրած շրջանակին համար. օրերը ու ամիսները յարողաբար կ'անցնին այսպէս. յոյսը միայն. զգացումներու ամենէն գեղեցիկը ու տեւականը, կ'առնուի իւր վիճակին սովորական դասութիւնը. հեռուոր սիրելիներու կարօտը եւ յիշատակը կ'ոգւտուի գինքը եւ ներկային ամեն տխրութիւններուն մէջ միակ գաղտնիք մը, իբր գեղածիծաղ հեռանկար մը, կը ժպտի իրեն, այն է վերադարձի հարաւորութիւնը. «Վերադարձ» ինչ մտապահ մտա տարագրին համար. ինչ զիւրիւր հրապոյր այդ շեշտին մէջ: Այս կացութիւնը հոգեկան սովորական վիճակ մը զարձակ է մեզ համար. երբեմն սակայն, շարժուիք գէպքերու հետեւանքով, տարազրին այս վերջին սիտիանքն իսկ ցնցուել կը թուի. թղթաբերի ցրուելը կուգայ եւ վստիկ հանգարտութեամբ մը որ վարժուած է անտարբերութեամբ ցրուել ամեն տեսակ լուրեր. կը յանձնէ քեզ սոց մը կամ նախկին մը սեւ շրջագիծներով ոչ սիրտը կ'սկսի բարախել, առանց բանալու կը գուշակես արդէն թէ հեռուն հայրենիքի ծոցին մէջ կ'ալ մտայն. մին եւս պակաս է այն պաշտակի գէղեցիկէն, որոց անոյն նայուածքին հանդիպել օտարութեան սիրտիչ խոհերէն մին եղած էր:

Գ.

Պէտք է ըսել թէ վերացական խօսքեր չ'են ասոնք. իրողութիւնն է որ ըստ կարելու ճշգրտորէն նկարելու կ'աշխատիմ. եւ իրօք ճիշդ ասանկ թուղթ մ'է որ գուտեց մեզ մի քանի օր առաջ աննայացաւ ի մահ մը. գրեթէ մօր մը կուրուտը. ԵԿԱԻԵԱՆ ՀԱՃԻ ՀԱՆԸՄԻ վախճանը. ինչ բարի է սակայն Աստուած որ մեծ վիշտերու փոխարէն արցունքի միտթարութիւնը շնորհած է. կսկիծին առաջին տպաւորութեան սակ, երբ ոչ մտածել հնար է ոչ խօսել. երբ երկրաւոր կեանքի անհաստատութիւնը նոր իմաստով մը կը շեշտուի, արցունքները կ'սկսին հոսիլ եւ անոնք միայն քիչ մը գովութիւն կը պատճառեն սրտին:

Դ.

Եւ հիմա երբ այս գերազանցօրէն տխուր գուտին առաջին ցնցուելը քիչ մը անցած է. երբ հետզհետէ մեր կուրծեան մի գաղտնիքով, կարող կ'ըլլաւ զարձակ շուրջս նայիլ եւ իրերու վրայ խորհիլ. հիմա ուր վերջապէս անորուած վշտին շնորհիւ գատողութիւնս իւր հեղինակութիւնը ստտիւնս մը վերստանանք կը թուի. կ'սկսիլ մտածել այս գուտին վրայ, իւր սոցուցութեան ու նշանակութեան վրայ, ու ազնիւ հանդուգեալին յիշատակը կը պատկերանայ այնքան առջեւ:

Ե.

Եւ հոս պարզանազրական կենսագրութիւն մը չ'է որ պիտի ընեն, թուականները ինքնին նշանակութիւն մը չ'ունեն:

Կ'ուզեմ միայն իբր հիւսիցող մը. մի քանի խօսք ըսել այն շրջանը գէղեցիկ վրայ որ կ'անհետի եւ որ սակայն իւր անջնջելի յիշատակով ու օրինակով աննուն պիտի մնայ յատուտ եւ արդարեւ իւր արժանաւոր սերունդին համար բարոյական ինչ գեղեցիկ ժառանգութիւն. աղնիւ մօր մը ստափնական յիշատակը, ինչ ներշնչուած անձնութեան ինքնաւոր կեանքի մը մէջ. ինչ գրգիռ քայլերու անոր նախնիներու վրային. շարունակելու անոր իտեալը. ինչ աւելի արժանի մեծարանք կարելի էր ընել անոր յիշատակին:

Զ.

Իայց ո՞վ էր այդ կինը, ինչ էր այդ կեանքը, պիտի հարցնէ ինձ ընթացողը. այդ կինը ինչպէս յիշեցի արդէն ԵԿԱԻԵԱՆ ՀԱՃԻ ՀԱՆԸՄԻ էր. անոնց համար որոնք հեռուէն կամ մօտէն հազորդակցութեան մէջ գտնուած են իրեն հետ, այդ անունը ինքնին յայտնութիւն մ'է. իսկ անոնց համար որոնք այդ առանձնաշնորհները չ'են վայելած, պիտի ջանաւ երկու բառով ըստարիւր վայն. նախ ուր ըսել թէ ան բարութիւնն մարմնացումն էր, ամեն բարի զգացում բուն գրած էր իւր սրտին մէջ. որչափ որ եւ մտնանք ինքնակախ տեսակէտով քիչ ասանկ միայն իւր մտքը գտնուած են, բայց այդ քիչը բնական կ'ընէ ինձ ճանչնալու. սիրելու ու յարգելու հզակեան գէղեցիկը, որ ունի ընտանիքի, որուն է միջավայրի համար պարձանքի տխրոտ մը կրնար համարուել, իւր հազուագիւտ ձիւրքերը ու յատկութիւնները բնածին էին ու յարատեւ. ջանքով ու գիտողութեամբ մշակուած այս կինը կրնար գահի մը վրայ ծնած ըլլալ. ու այդ գահին զարդը պիտի ըլլար. թուական մը պիտի կազմէր:

Իայց ինչպէս կարելի է արդէն իմ խոնարհ գրչիս համար նկարել գէղեցիկ մը, գեր իվեր գրչի ու նկարչի գէժ մը, բարոյական ու հոգեկան իւր էութեան մէջ. սրտապնդող ու ներշնչող իւր զեղութեան մէջ. ինքը մեր ծննդավայրին սպանուատուն ընտանիքներէն միտն գուտուրը եւ աղնուազոյն ընտանիքներէն միտն հարսը, բնութեան գեղեցիկագոյն շնորհներով օժտուած. յարատեւ ձուկ կեանքի մը վարժուած համարութեան, պարզութեան, քրիստոնէական անբուժեան ճշմարիտ պատկերն էր սակայն. իւր ընդունելութիւնը, իւր խօսքին փափուցութեանը, պատշաճութեանը իւր գիտութիւնը անհասարկելի էին մեր քաղաքին մէջ. առանց իրեն որ և է գուտարու, որ և է հանդէս թերի էր. իւր ներկայութիւնը կատարելութեան կ'ընթեր կը դնէր ամեն բանի, անսովոր փայլ մը կուտար ամեն համարեալին. Մարդ շատ տեղ պտտած, շատ գեղեցիկ ճանչցած կրնար ըլլալ. բայց այն ինչ կը գտնուէր այս գերազանց կնոջ հանդէպ, երբ կ'զգար արդէն անոր մեծութիւնը անոր վեհութիւնը. բայց թէ ո՛ր և է ինչպէս գիտցած էր ան անփոփոխ ու փայլեցնել. այն ստող գատողութիւնը, գրաւիչ բանակալութիւնը, հոգեկան քաղցրութիւնը որ խօսակցին միտքը կը գերէր, որ պատկառանք կ'ազդէր, սոսիւս հոգեբանութեան անքննին մի գաղտնիքն է:

Ինչ գողցես անգիտակցից իւր գործած տպաւորութեան, կը շուրջի միշտ իւր նուրբ գորովը, իւր փափուկ ուշադրութիւնը եւ մարդ ինչ գիրքի եւ վիճակի ալ պատկանէր, կարծես սիրտուած գուրս կ'ելնէր այն յարկէն ուր այս աննուն կնոջ բարութիւնը կը ճատագայթէր. իւր սիրտը շատ լայն էր, մինչդէռ մէկ կողմէ վերջին ծայր ուշադիր էր չի թերանալ այն յարակիր ուշադրութեան մէջ զոր պարտական ըլլալ կը կարծէր ամեն անոր որ անուն մը, ստաղանդ մը, գիրք մը կը ներկայացնէր քաղաքին մէջ, միւս կողմէ. իւր սիրտը ու քաղաքը կը շուրջէր նաեւ այն ամեն զմարտութեանց որոնք իրենց արդատաւորութեան ընթացքով կոչոււն կ'ընէին իւր իրենք քնքոյ սրտին. սէր էր ան բառին բուն ու ճշմարիտ նշանակութեամբ. չ'եմ կարծեր ու գտնուի միակ աղքատ մը ամբողջ մարդկութիւն մէջ, որ յիշէ, իւր փորձառութեանը մէջ. գէթ օր մը յորում ի գուր բաղնաւ ըլլայ այդ ողորմատէր տան գուտը. անոր սիրտն ալ բաց էր իւր գրան պէս, կարեւոր պարագայ մը, ցոր-

չափ կը յիշեն, ան կը ճանչնար ամեն աղքատ իւր անունովը, վիճակովը, անկարութեան տեսակովը, եւ զբաղին, հացին կամ օժտին հետ սրտէն ալ բան մը կուտար. յաճախ քաղցր բան մը, որ իւր շրթութեն բղխելով, երկնային մեղեցիկ մը պէս կը հնչէր այդ խեղճերուն. ան գրեթէ թէ տալու. եղանակը աւելի կարեւոր է քան տալը. կ'երեւակայէր թէ այդ հեղ զրկեալները սակաւ աւելի կարեւոր եւ համարկան բառի մը քան որ համարանօք կարկտուած չոր նպաստի մը եւ այսօր կը խորհիլ թէ շատեր, նոյն իսկ այս խոնարհ կարգէն. ջերմ արցունքներ կը հոսեն կորուստի մը համար. որ բարութեան գաղափարին ներկայացուցիչներէն մին ալ կը պակասեցնէ:

Ը.

Բնականաբար ասանկ փափուկ զգացումներով օժտուած սիրտ մը. համակ գուտ ու գորով էր իրեններուն առթիւ. սիրոյ գանձեր կը պարտանակէր իւր սրտի հատորներուն համար՝ երբեմն հիացմամբ գիտած եւ զինքը. երբ անգիտակ եղած գիտողութեան, մինչ աչքերը իւր անուն գորովը կը ցողացնէին. ան, մայրական սիրոյ վստիկ զեղումին մէջ, իւր ոճին նկարագրող պարզութեամբ. «ա՛ւյ չաղա՛ս» կը կանչէր իւր զաւակներէն որ եւ է մին, այդ բառը իւր շրթանց վրայ իր սովորական իմաստը կորսնցուցած, նոր ու սրտայոյզ շեշտ մը կ'ոտանար. ամբողջ յայտնութիւն մ'էր. Որչափ դառն է այժմ այս կորուստը ընտանեկան այն սրտաբեկ շրջանակին, որ զի, դուտար, հարս կամ փեսայ որ ասանկ սրտի մը գուրգուրանք ճանցած են, որ ասանկ մօր մը յորդորն ու հովանին վայելած են. եւ հիմա կը կորսնցնեն դայն. իմ պարտք էր միտթարական խօսքեր ուղղել իրենց, բայց թող ներէն ինձ, եւ թէ իբր հեռուոր գաւակ մը, իմ յատուկ յուզումս կարգելէ զիս իրենց կսկիծը անօրելու փորձ մը ընել, սիրելի քոյրեր ու եղբայրներ, ցաւի այս տխուր պահուն, որ եւ է ճայնի լսելէ առաջ, արցունքի մեր հարկը վճարենք ողբացեալ մայրերունս յիշատակին. ճշմարիտ սիրտի մը կայ այդ յուզումն մէջ, որ այնքան ճշգրտօրէն կ'արտայայտէ մեր հոգւոյն տրտումն անգիտութեան եւ փափաքը:

Թ.

Ինչ զգաց արդեօք, ինքը, այդ գերազանց մայրը. երբ մի քանի տարիներ առաջ, սրտազրաւ հանգամանքներու մէջ, կորսնցուց իւր անդրանիկը, իւր հոգւոյն հատորը. Ան իւր ընդհանուր կարողութեանը լիութեան մէջ գաւակ մը, գործօն անձնուէր, իմաստուն, որ որ և է մօր ազնիւ հպարտութիւն մը կրնար պատճառել. ինչ հարուած զգացուն սրտի մը համար. Հիմա, անուշա լաւագոյն սոխարի մը մէջ, զերծ ներկային սեղմումներէն ու անձկութիւններէն մայր ու որդի այլուտ անբաժան, կը վայելին սոյն փոխադարձ սէրը, զոր երկրի հանգամանքները այնքան կ'ընդհատէին ու կը խանգարէին, անոնց որ կը մնան իրենց վշտի արդար մեծութեան մէջ, միակ յարող մը կը գտնուէր ուղղելու, հետեւի այն գեղեցիկ շաւղիները հոն գուցէ սրտի օրինակը գծած է. այն գուրգուրանքին մէջ զոր ցոյց պիտի տան. իբր ընտանեկան աւանդութիւն մը մշտնջենալու իրենց մօր առաջինական յիշատակը, այդ անհրաժեշտ յարգանքին մէջ, այն ճշմարիտ չափը յայտնած պիտի ըլլան իրենց սիրոյն ու կսկիծին. «աղտուակալութիւնը կը պարտաւորէ. » կ'ըսէ առաջը, եւ պիտի բարեփոխուի, «առաքինութիւնը մը պարտաւորէ. » Ես յուսով պիտի սպասեմ անանկ որ այդ եղական մօր օրինակը. իբր բարոյական լաւագոյն ժառանգութիւնը. բազմապատկուի եւ ընտանի շրջանակին մէջ, եւ հոն ինչպէս նաեւ ամենուրեք ուր ասանկ մտքուր կեանք մը արձագանգ կրնայ գտնուի իւր օրինակը, իբր ներշնչուած մը համարանուն մայրեր ստեղծէ այնու միայն յուէտ ներկայ կրնայ ըլլալ յատկանշական քաղցր յիշատակ մը. որ ինքնին անուն է արդէն:

Ճ.

Եւ այժմ, փակելու համար, կուզեմ երկու բառ եւս ըսել. ընդհանուր տեսակէտով մը. ուսանկ գէպքերը թեւազրական են եւ կ'արժէ որ խորհիւք անոնց վրայ. առհասարակ, մեր օրուան կեանքին մէջ այնպէս կը շարժինք իբր թէ

մեր ընթացքը վախճան մը չ'ունի. եթէ վայր-կեանք մը սթափինք պիտի տեսնենք որ, մեր մէջ ու մեր շուրջը, առեն ինչ փոխուելու վրայ է. հակառակ մեր ջանքին ու եռանդին, ոչինչ աւարտելու կոչուած ենք մենք, առեն ինչ հոս կ'սկսի. բայց այդուր կ'աւարտի. քայլ մը եւս ու կարգը մերն է. ուրիշներ մեր սեղը պիտի անցնին, նոյն սղուով ու նոյն սկզբունքով, ու մեր հողուոյն իրենքն ու երազներն անոնք եւս պիտի շարունակեն առանց աւարտելու. հետեւաբար ճանչնանք կեանքին գերը ու կոչուելը. չի փարինք այն բաներուն որոնք ջնջուելու, ան-յիշատակ կորսուելու կոչուած են. այլ խորհինք յաւիտեանական իրերու վրայ. գիտնանք ժառանգաւորը ու անասնանք զանազանի իրարմէ եւ երբ, սուգէ իսուգ. հողինքնու այս թաւալուսին մէջ, հրատեչար մեր գերագոյն ժառը հնչէ, կարող ըլլանք, արդարին հանգարտութեամբ ողջունել գերեզմանը. ոչ թէ իբր իրաց վախճանը այլ իբրև փոխանցական դուռ մը լուսաւոր մուտքի մը, որ սկիզբն է յաւիտեան-կանութեան:

Կ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒՄ

—Սրահատրի կը հեռագրեն թէ՛ Պոլսոյ մէջ ձերբակալուած են Կայսերական անձնապահ գունդէն երեք սպաներ: Ասոնք երկուքի պալատին և Սուլթանի անձնական աքաբրը մեկնելուն մանրամասն յատակագիծը ունին եղեր իրենց քով:

ԹՐԱՆՍՎԱԼ

Պաշտօնական տեղեկագիր մը կը ժանուցանէ թէ՛ Մայիս 22 ին Հելսինկի մ'օտ գաշնակցական պատերազմի կենքը տեղի տուած են ջախջախիչ ուժին առջև և Անգղիացիք Հելսինկի գրաւած են:

Այս պատերազմին մէջ 60 Անգղիացի ըսպաննուած կամ վիրաւորուած և 200 զինուոր երեք սպաներով գերի բռնուած են:

Պօէրնբուր քաղաքին հրամանատարին եղբոր, Գրիսթ Պօթաի, զօրագլխի բազկակից անուանուելը՝ մեծ գոհունակութիւն պատճառած և քաջ Պուրկիները աւելի ևս պատերազմը մղելու գրգռած է:

Անցեալ շաբթու քառասունի չափ տեղացի Պաշտօններ իբրև դիտաւոր պատերազմի կենքու մէջ մտնելէ առաջ, զինուորական Կառավարչին կողմէ քննութեան ենթարկուեցան:

Պօէր գիշերապահները Աբրահամ Գրալի մէջ ձերբակալուած են վաճառական մը, որ երեք վակոն պաշար կը փոխադրէր: Այս ապրանքներուն համար վաճառագործին մէջ նշանակուած գնոյն համաձայն սուգանք առնուած է վաճառականէն:

Գլխաւորութիւն հեռագիր մը կ'ըսէ թէ՛ Տըլարնէի և Անտրէ Գրոնթէի հրամանատարութեանց տակ գտնուող Պօէրները թուով 3000 են:

Մէքլըրիկի ուղղութեանը մէջ Պօէր չ'կայ:

Ընդհանուր համոզումը այն է թէ՛ Օրանթի մէջ թշնամութիւնը վերջացած են:

ՊՕԷՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

Նօրա մը հրատարակեցին, որով կը ծանուցանեն թէ՛ անկարելի պիտի ըլլայ Ամերիկեան մեծ քաղաքներէն իրենց եղած հրաւերներուն պատասխանել:

Իրենց տրուած հրահանգները գործադրելու համար հարկ եղած ժամանակը եւ թապ մնալով, պատգամները ներածին պէս իրենց երկիրը վերագտնուաւ միտք ունին:

Շատ մը Ամերիկայիէլու խնդրանաց վրայ, քանի մը օր ևս մնալ որոշեցին Միացեալ Նահանգներուն մէջ:

ԹՈՒՍԻԱ

Ս. Բէթէրպուրիէ Տեյքի-Մեյքի քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Ռուսիոյ մէջ հանգանակութիւն մը բացուած է, Զօրավար Գրոնթի պատուոյ բաժակ մը ընծայելու համար: Այս բաժակը 5000 ֆր. պիտի արժէ ելեր:

ԳԵՐՄԱՆԻԱ

—Ափրիկէի Հորաւ. Արևմտեան Գերմանական և Փորթուկալեան ստացուած քները իրարու միացնելիք երկաթուղոյ շինութեան համար քաղաքական և 'երմտական կարգադրութիւնները վերջացան:

Այդ ձեռնարկին համար հարկ եղած գրամագլուխն է 50 միլիոն ֆրանք. որ պիտի տրուի հուսար բաժնով Անգլիոյ և Գերմանոյ մէջ:

Երկաթուղին Կրիթ-Յիլ-Պէյէն Օթալի պիտի երթայ և 400 մղոն երկայնութիւն պիտի ունենայ:

Կը յիշուի թէ՛ ծրագրոյն առաջին բանակցութիւնները Պէռլին տեղի ունեցան 1899 ին Սէսիլ Ռօտի նախաձեռնութեամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐՁՐ ԽՏԻՎԸ. — Շարաթ կէս օրէ օրէ յետոյ Ն. Բ. Խտիվը, իր հետևորդներով Մանրուա զբօսանալ գնաց:

Ն. Բարձրութեան Բա-էլ-Թիլի նաւամատոյցէն մեկնելու պահուն, Խտիվական անձնապահներն յարգանաց ցոյցեր ըրին:

Առողջապահական վարչութեան քարտուղար Զանանիբի և Տր. Կիւրլացցի Պէյերը Խտիվական զբօսանալուն մեկնելէն յառաջ շոգեխաւ գացին, ձեռք առնուած առողջապահական միջոցներուն վրայ հսկելու համար: Զբօսանալուն մէջ Ն. Բարձրութեան ընդունուելու պատիւը ունեցան երկու Պէյերը, որոց մեկնումէն վերջ Մանրուան ցամաքին հետ հաղորդակցութիւնը դադարեցուց:

Բ. Խտիվուհին, գահաժառանգ իշխան և պղտիկ իշխանուհիները նաւուն մէջ էին:

Ն. Բ. Խտիվին մեկնման առթիւ 21 թխումնօթի հարուածներ արձակուեցան:

ԵՂԱՍԹՐԱՊԱՆԸ. — Անցեալ հինգշաբթի առաւօտ, ժան Տէմօնձանթօյի գատը ինչպէս տեղական թերթերը կը ծանուցանեն, Հելլենական ատենին առջև հանուած է:

Վիճաբանութիւնները ատենին սովորական ունկնդրութեանց սրահին մէջ տեղի ունեցած է, ուր բազմաթիւ Յոյն հպատակներ ներկայ կը գտնուէին:

Սրահը լիցուող բազմութեան հետաքրքրութիւնը գոհացում չէ գտած, որով հետե գատը իւր ամբողջութեամբ մէջ տեղ գրուած չէ:

Ատենին բացուելէն առաջ մարդասպանը և իւր կինը տնտեսականներու յատուկ նստարաններու վրայ աւզուորուած էին:

Գատաւարութեան սկիզբը, Տէմօնձանթօյի փաստաբանը ատենին անձեռնհասութիւնը աւարկելով, իւր պաշտպանեալի գատին յետաձգումը պահանջեց:

Փաստաբան Լիճիգաս, երկարօրէն պարզեց ատենական այն ամեն փաստերը, որոց համար պէտք է գատը առաջիկայ նիստին յետաձգել, որպէսզի Աթէնքի Գերագոյն ատենանք ժամանակ ունենայ որոշելու Ազգաբանագրոյ ատենին ձեռնհասութիւնը կամ անձեռնհասութիւնը:

Ընդհակառակը Օկիսթին կնոջ փաստաբանը պահանջեց որ գատը չ'յետաձգուի և իր պահանջումը հաստատուելու համար, շատ մը օրէնսգիրներու կարծիքը երևան բերու:

Գատաւորները խորհրդակցութեանց սենեակը քաշուեցան, որ քիչ յետոյ Պ. Տէմարաս, գատը առաջիկայ նստին յետաձգուելու վճիռը արտասանեց:

Ոճրագործները Արմալի բանոց առաջնորդուեցան:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

— Լոնտրա 1 Յունիս. — Բրէթօրիայէն Նիւ-Եօրթ Հերալդի քաշուած հեռագրէ մը նայելով, քաղաքին վրայ յարձակող Անգլիացի զինուորները, երեկ առաւօտ ետ մղուելը են:

— Լոնտրա 2 Յունիս. — Բրէթօրիայէ լուր մը չը կայ: Զօրավար Ռօպրթսը Յունիս 1 թուականաւ Օհաննեսպուրիէն կը հեռագրէ թէ զօրավար Ռինալը իրեն կեդրանացման շարժումին մէջ 30 մեռած և 150 վիրաւորեալ ունեցաւ:

Գնդապետ Գոլլէյը Հելսինկի գրաւեց մայիս 29. 44 մարդ մեռած և վիրաւորուած ունենալով:

— Փէքին 2 Յունիս. — Օտար զինուորները հասան և գուռները բաց գտան. փողոցներուն մէջ կարգապահութիւնը կը տիրէ. կառավարութիւնները ամեն դիւրութիւններ շնորհեցին:

Այսօր Գերմանական զինուորներուն գալստեան կ'սպասեն:

— Լոնտրա 3 Յունիս. — Լորտ Ռոպրթս Յունիս 2 թուականաւ Օհաննէսպուրիէն կը հեռագրէ թէ ամեն ոք հանգալու է և ժողովուրդը զէնքերը վար կը դնէ:

— Լոնտրա 3 Յունիս. — Մայիս 29 ի պատերազմներուն մէջ Համիլթոնի ունեցած կորուստներն են, գնդապետ Պրէնչ և ութ սպայ վիրաւորուած:

— Փէքին 3 Յունիս. — Կրտուի թէ Անկիլգան եկեղեցւոյն երկու միսիօնարներէն մին Եէն-Չէնկի մէջ սպաննուած է և միւսը կորսուած. Փօթիկ-Ֆիւէն վեց փախտականներ թիէն-ձին հասան:

— Աէն 3 Յունիս. — Մեաւազորութեան հաստատութեան մէջ շարունակող գործագուրի միջոցին քարեր նւտուեցան զինուորներուն վրայ: Այս վերջինները ստիպուեցան զէնքերն զործածել. և վերաւորեցին երեք ցմռարարներ և մէկ հատ ալ ըսպաննեցին:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

-0-

ԱՄԵՐԻԿԱՅ, Պոսթօն. Տիար Կ. Յ. Գ. — Որչափ որ կը յիշենք պատանակման չէր եւ չէր կրնար ըլլալ:

Թրակագրիչը ը գտնել անկարելի կըլլաւ. շատ ընդարձակ միջոցներ ունինք. չուտով զրկեցէք:

ԱՍՈՒՌԻՔ, Կ. Հ. — Ձեր զրկած մանտա-բոսթը գանձեցինք չնորակակալեալ:

ՍՕՀԱԿ, Տ. Մ. — Կը ցաւինք որ առ այժմ չ'պիտի կարենանք ընդունել մենք ալ յանձնարարութիւններ ունինք, որոնք քիչ ատենն պիտի հասնին:

ԳԱՀԻՐԷ, Գ. — Սերաստացի հայոց շահաւերական ընկերութեան մէջ տեղի ունեցած միջադէպէն տեղեկութիւն չ'ունինք: Լաւ հասկընալէ վերջ միայն կրնանք զրկուի:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ, Տ. Յ. Թ. — Ձեր առաջարկը ընդունելի է եւ կը գործադրուի:

ՊՈՒԼԿԱՐԻՍ, Ռուսոճու. Կ. Ա. — Արշարոյսի առաջին թիւէն մինչեւ 70րդ թիւը անթիւրի զրկուած է ձեզ եւ ոչ մին ալ վերագրածուցած էք: 70րդ թիւը որ վերագրածուցած էք ստացանք: Պէտք էր հաշուէիք թէ մենք այդ թիւերը ձեզ զրկելու համար թերթին վրայ փոթի ծախք մ'ալ կանխիկ վճարած ենք: Կետեւարար մինչեւ ձեր մերժած թիւը, 70րդը, գոնէ պարտական էիք ազնուարար վճարել, որով մենք ալ մեր պահանջի բաց մնացած հաշիւներովը երկար բարակ զբաղելու պէտքը չ'էինք ունենար:

Կը յուսանք թէ չուտով մեր պահանջին շափ գումար մը մեզ հասցնելու կը հաճիք. երկրորդ անգամ ձեզի զիմելու յողնութենէ մը ազատելու համար գմեզ:

Մեր փորձառութիւններուն վրայ հաս մ'ալ կ'աւելցնէք:

Մեր զբաղումները շատ խիստ են մեզ համար:

ԳԱՔԷՍՕՔԱ

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղար-Մրուրի խանութին մէջ պատրաստել Ե՛նձնի սուրճին ամենաբարձր և անխարդախ տեսակէն իրեն զիմող յաճախորդներ օրան 16 զրջ ողջի հաշուով, զուտ քաւէ պիտի կրնան գնել. կըուոյ մէջ ալ ուղղամտութիւն գտնելով:

ՆԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչեւ ցարդ սովորութիւն չէ եղած կամ քիչ պատահածէ՛ որ հայ թերթերու վարչութիւնք մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Ազգայկը պատահի որ այս ինչ կամ այն ինչ թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ եւ գրիթէ գտնել անկարելի կըլլայ:

Մենք «Արշարոյս» ի հրատարակման առաջին օրէն, մեր սպառումին քանակը ինկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքածոյի համար աւելի տպագրել տուած եւ առաջին վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշարոյս» ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան գիմել թերթին ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Լաթկազմին համար 10 ֆրանքի գումարով զրկելով մեզ:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ա. ՊԱՐՏԱՔ

ԳԱՀԻՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՄՊՈՒՐԿԻ, ՊՐՈՆՍՎԻԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆՑ

Պատիւ ունի ծանուցանել չ'երկար տարիներ վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու առեւտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարունակելէ եւ կատարեալ փորձառութիւն ստանալէ վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերէն մեծ քանակութեամբ ապաւրանք տուած է եւ յետ այսու մինչեւ ցարդ ծախուածներէն աւելի զեղծեալ գներով պիտի վաճառէ:

Իրեն զիմող գնորդները կատարելապէս գոհացնելու եւ մինչեւ ցարդ այս առեւտուրին շուրջը տեղի ունեցած զգոհութիւնները բաժնաւորահամար մեծ հողածուծիւն պիտի ունենայ, եւ անոնք որ Ա. Գլխաւ տոմսերը ունին իրենց քով, մինչեւ վերջին Գլխաւ յիւրիւրովը հանդերձ իրենց պիտի զրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքիի մէջ Պ. ԳՕՆՕ-ՄՕՅԻ Պանքան:

Սոյն տոմսերէն կը ծախուին նաեւ իՄուսքի, Տիար Գ. Պալըզեանի խանութին:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսերու գները:

Համպուրկի Գլխաւ. իւրաքանչիւրը 131)2էն, — ամբողջ 96:

Պրոնսվիկի 6 Գլխաւ. իւրաքանչիւրը 16ըրուշէն, — ամբողջ 96:

ՄԱՆՈՒՑ. — Հունգարական տոմսերու Ա. Գլխաւ թիւերը արդէն հասած են եւ հրատարակ կ'ըլլան:

1—8

ԿՈՊԷՌՊԵՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տաններկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբարց ասն, ինչպէս եւ ուրիշ մը քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լ. Է. քէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէի իյէ Շարիա Գաւնէջ ՕՔԷԼ ԵՒ ԲԷԼԻՍՏԻ ճիւղ գիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ դուրսը կուսիներ ի հարկին:

Ակրաւեսիաւան բնական մեծութեամբ: Կենդանագիրներ ամբողջական մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլիմետրիս:

Իւզաներկ եւ ջրաներկ պատկերներ կ'ըն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ըն:

Գունի ռըքուշ, ճեպիդըքման եւ ըն:

Իրեն զիմող յաճախորդներն համել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն դուստուր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵԻՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՍԱԳՐՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. Լ. ԵՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ԻԳՆԻՐԷ

ՏՕՔԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒՅԵԱՆ

Ի Շարիա Գոթ-Պէյ, թիւ 20

Իր Ձրի խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կ'են օրէ առաջ ժամը (ը. Կ.) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղող աղքատ հիւանդներու: 5—8

ՏԻՐԱՆ ՀԻՒՄԻԻՉԵԱՆ

Շարա Մօհաւեհ Աշիվագրոյիս դեղատանին քով:

Իրեն զիմող յոճախորդաց, տոկուն ապրանքներով և նորաձեւութեան համաձայն, ձեւաւոր հագուստներ պատրաստել կը խոստանայ խիստ ջափաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հոն գիմողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի և ճաշակաւոր ու ձեւաւոր զգեստ ունենալու համար դարձեալ Հիւրմիւլզեանը պիտի փնտռէ: 7—8

ԳԵՐԵ ՈՐՁՈՂ ՆՅԵՐՈՐՆ

Գահիրէի և չըլակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտք կը ծանուցուի թէ Հայերէն աւելն գիրք, (Իսաակյան, Գարոջանյան, Գիսակյան, Գրակյան Արուեստակյան, Բաւախիւրակյան, Վիպակյան եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիէննա, կարելի է գիւրաւորուելի պայմաններով ձեռք բերել՝ գիմեղով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալատեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԼԱԲՈՅԺ

Ապսիւն Շարա Բուպրի Թ/իւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը, ամբողջական նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն՝ տոկունութիւնն առ նուազն կրկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճիւղ դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 5—5:

Աշխարհի մէջ գոնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

Ա.Լ.ԲՄԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յԱղեքսանդրիա: